Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

14.03.2024 Զովունի վարչական շրջան

Սույն թվականի մարտի 14-ին, ժամը 15.00-ին <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (առաջին փուլ) Նաիրի խոշորացված համայնքի Զովունի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Զովունի վարչական շրջանի 1-ին փողոց 176 հողամաս և 1-ին փողոց 281 շինություն հասցեներում բնակելի շենք կառուցելու նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկում:

Ելույթ ունեցան՝

Բացման խոսքով հանդես եկավ Նաիրի համայնքի քննարկումների պատասխանատու Ս.Թորոսյանը:

Նախագծի ճարտարապետը ներկայացրեց նախատեսվող կառույցը, դրա տեխնիկատնտեսական ցուցանիշները և լուծումները:

Ա.Մինասյան ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց որ հայտում համաձայն օրենքի կներկայացվեն տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, ինչպես նաև համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնք ուղղված են մեղմելու, նվազեցնելու և կանխարգելելու հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա:

Ծավալվեց քննարկում կանաչապատման, ավտոկայանատեղերի, նախատեսվող շենքի և հարակից շինությունների հեռավորությունների վերաբերյալ:

Քննարկումների պատասխանատուն հավանություն հայտնելով նախատեսվող գործունեության վերաբերյալ, նշեց որ սահմանված ժամկետում կներկայացնեն իրենց դիրքորոշումը:

Դիտողություններ և առաջարկություններ

Չկան

Հանրային լսումների արդյունքում մասնակիցները որոշեցին՝

- Հավանություն տալ նախատեսվող գործունեությանը:

Վարող և Քննարկումների պատասխանատու Ս.Թորոսյան _____

Կառուցապատողի ներկայացուցիչ Մ.Մկրտչյան _____